**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/12 ծածկագրով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի շենքային պայմանների ապահովման և բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

24.06.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |
| Անդամներ՝ | Ա. Քոչարյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Ա. Զոհրաբյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

## «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

- հայտով չեն ներկայացվել աշխատակազմի մասին տվյալները, մասնավորապես՝

- լիազորված մարմինների կողմից տրված արտոնագրերը, իսկ նախահաշիվ կազմող մասնագետի համար ԲՈՒՀ-ի կողմից տրված դիպլոմը:

- CV՝ համաձայն հրավերով ներկայացված ձևաչափի:

- Աշխատակիցների գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունը մատուցելու վերաբերյալ:

## «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ

- Ներկայացված փաստաթղթերի շրջանակներում մասնագետներից Թագուհի Հմայակյանի և Կարեն Մկրտչյանի հրավերով պահանջվող 5 տարվա մասնագիտական փորձառությունն առկա չէ:
- Հավելված N 1.2–ի 6-րդ և 7-րդ տողերով (նախահաշվիվ կազմող մասնագետ և շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետ) ներկայացված է միևնույն մասնագետը: Հրավերի 2.4.1 կետով սահմանված է, որ համապատասխան մասնագիտացումներով պահանջվող աշխատանքային ռեսուրսները չեն համարվում համափոխարինելի:

## «ԼՅՈՒՍԱՇ» ՍՊԸ

- Ներկայացված չէ ճարտարապետ Արշակ Մարգարյանի արտոնագիրը, գնման առարկա հանդիսացող ծառայությունը մատուցելու վերաբերյալ համաձայնությունը,
- Ներկայացված չէ նախահաշիվ կազմող մասնագետ Օնիկ Յաղուբյանի CV-ն,

- Ճարտարապետ Արշակ Մարգարյանի և Ճարտարագետ-կոնստրուկտոր Կարեն Մկրտչյանի CV-երով ներկայացված աշխատանքները չեն համարվում նմանատիպ:

**Նմանատիպ է համարվում IV կամ IV-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի հասարակական կամ բնակելի նշանակության օբյեկտի կառուցման կամ վերակառուցման/ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում, որը պետք է ստացած լինի համապատասխան քաղաքաշինական դրական փորձաքննության եզրակացությունը: Ընդ որում, համաձայն հրավերով սահմանված CV-ի՝ նմանատիպ աշխատանքները պետք է իրականացված լինեն վերջին 10 տարիների ընթացքում:**

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին, «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ին, «ԼՅՈՒՍԱՇ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 25.06.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացնելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/12 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Ջհիրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 26.06.2026թ. ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հացեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Ջհիրաբյան

Անդամներ՝ ------------------------------ Ա. Քոչարյան

------------------------------ Հ. Գինովյան

------------------------------ Տ. Կոմիտասյան

------------------------------ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Ա. Մանուչարյան